

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
արեկանի	7 "
վեցամսեայ	15 ֆր.
Արսասահմանի համար	8 "
արեկանի	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցում տողը ուսուցիչներին համար 40 սանթիմիտի վերջին երեսին համար 20 սանթիմիտ է, երեսին ու երկուսն ընդամենը համար 20 0/0 զեղջ կրկնայ:

Վառճառի համար ձեռք 40 սանթիմիտ է

ՇՈՒԹՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԹՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դասակ եւ դրամ
դրկել խմբագրութեան
հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjourn"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
ձեռք 15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ
տրուիր

ՇՈՒԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ ԵՒ ԿՍԵՆՈՒԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՆՈՒՆԻՍՏՐԱՆԱԿԱՆ ՍՈՍՏԻՍՏՐԱՆԱԿԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան իրեն դիմել Չար-Պօրիս փողոց Վառճառ

Café Promenade
Vienne

Այս շքեղ սրճարանը կը գըտնուի Վիեննայի Կոմիտեի քարափին վրայ, կը ստանայ զանազան հայերէն թերթեր, Առհասարակ բոլոր հայ կամ արեւելեցի վաճառականները այս տեղ կը յաճախեն, ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրումները եւ անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՇԱՂՆԱԿՑԱԿԱՆ ՔՐԱՆԻԿ

ՀԱՒԱՏՈՒՄ ԵՄ

«Շարժում ու կարգացի Պարսկաստանի մի ընկերոջ ինձ ուղղած նամակը, որով նա յայտնում էր թէ՛ մինչեւ օրս յուսարով որ իմ քննադատութիւնները վերջ պէտք է տան տիրող կացութեան լուսմէր. բայց իր այդ կարծիքում հիասթափվելով այլեւս աւելորդ է համարում լըռել...»

Ինչ «Չայն» Հայրենեացիում կարգացի Ամերիկայի դաշնակցական ընկերների «1905ի Պատգամաւորական ժողովի քարտուղարի մի յայտարարութիւնը՝ որով մեր ընկերը ինքզինքը ծանօթացնելով դաշնակցական ընկերներին եւ ընթերցողներին, յայտարարում է թէ Դաշնակցութիւնը արմատական բարենորոգման պէտքը ունի եւ ինքը ուսյնանքի բողոքող ընկերները գալիս են իրենց ճիգերը միաց-

նելու «Վարդոյի» ճիգերին յուսարով գոնէ անցեալ սխալների կրկնութեան առջեւ առնելով յայտարարութիւնները եկած յայտարարութիւնները շատ նշանակալից եւ խորհրդաւոր են, որովհետեւ նրանք գալիս են այնպիսի տեղերից ուր Դաշնակցութեան ներկայ վարիչները իրենց իշխանութիւնը եւ տիրապետութիւնը անդրազնուի եւ մշտապէս կայուն են երեւակայել...

Պարսկաստան, Դաշնակցութեան եկամտների ամենախոշոր մասը կու տուող այդ մութ ու խուլ անկիւնը, ինտրիքների, իրար ոտքի տակ փորելու անհամաձայնութիւնների, վայրենութիւնների եւ սատրապութիւնների այդ լուռ վայրը, ուր ամեն բան վերջացել է առանց բռնաբողոքի, առանց մութ գործերը լոյս աշխարհ հանելու ճիգերի, այսօր վերջապէս ձայն է բարձրացնում. Մենք մեր կողմից այս անգամ չենք ուզում վարպետը բանալ Պարսկաստանի օւրխուր գործունէութեան վրայից, ուր ամեն ինչ կատարվել է բացի իր հարեւան թրքահայ նահանգներին դրական օգնութիւն հասցնելուց, ուր տեղի ունեցած մութ գործերը ամեն օտարի գըրթից ստիպել են իրենց շատ գանդաղաշարժ արեւելեան բիւրօյին անգամ շարժվել եւ քննիչ լազարկել. Պ. Պ. Պ. Չ. Մ. Ե. եւ այլն գնացել են այդ տիրահաշակ, թշնամութիւնների, ինտրիքների եւ Դաշնակցութեան եկամտները կու տուող վայրը եւ միշտ վերագործել յուսարով, յուսահատ, սակայն մեր ճառախօսները, մանաւանդ Ամերիկայի ճառախօսները, երբէք չեն զլացել Պարսկաստանը ներկայացնել շատ եւ շատ չափազանց վարդապոյն ներկերով. եւ գրեթէ Դաշնակցութեան զէնքերի մթերանցը, որտեղից տասնեակ տարիների ընթացքում հազիւ մի քանի տասնեակ զէնք է մըտել ծածկաստան...

Պարսկաստանի ընկերը, իր լեռ գրութեան մէջ աւելցնում է որ այդ տեղ էլ սկսել են «Շարժում» եւ ինձ առել, Բնական է, մեր քննադատութիւնները անուղղակի կերպով դիպչում են եւ Պարսկաստանի մութ գործիչներին շահերին եւ ապագայ վերանորոգութիւնները սպառնում են վերջ տալ եւ այդ տեղ ապաստանած լաքեներին, որոնք այլեւս չը պէտք է կարողանան զանազան պատրականների տակահագին գումարներ վատել եւ վատել տալ. Ասում են... ատեցէք պարոններ... մենք չենք ատում, մենք հաւատում ենք որ բարենորոգման ցախաւելը Պարսկաստանի կոչումը Անգերեան ախոռն էլ կը մաքրի ու վառարկանի նահանգը վերջապէս իրեն կից կունենայ մի սահման որը կը զբաղի միայն երկրի վրա մըտածելով եւ նրա պէտքերը հոգալով:

Ամերիկայի ընկերոջ յայտարարութիւնը, նրա տրամադրութիւնը մանրամասնօրէն խօսելով «Չայն» Հայրենեացիում, վերջապէս մինչեւ օրս «Շարժում»-ում, «Երիտասարդ Հայաստան» եւ «Չայն» Հայրենեացի մէջ երեւան եկած դաշնակցական ընկերների հրատարակութիւնները ցոյց են տալիս որ Ամերիկայում վաճառանի օյիւրազու թիւների եւ կազմակերպութեան թերութիւնների դէմ բողոքող ընկերներ ներքնապէս, մինչեւ իմ հրապարակով խօսելը, եղել են սակայն ջամբաղ վաճառանը իր սատրապական ձեւերով՝ բռնութեամբ, ազդեցիկ բողոքողների պաշտօնով եւ ամսականով կաշառելով, մի քիչ թոյլերին սպառնալով՝ կարողացել է խեղդել ամէն ինչ. ու Դաշնակցութեան եկամտաւոր խոշոր մասը ծախսելով գործիչների, քարոզիչների վրա. Ամերիկան ներկայացնել ինչ որ աւետիաց երկիր... Ու այսօր ի միտքս բերում եմ որ մեր եւ ի մեծ գթաբխութիւն վաճառանի ու իր նմանների հաս-

կանում ենք թէ Ամերիկան ինչպէս է կառավարվել:

Ամերիկայի ընկերը, իր յայտարարութեան մէջ այնքան էլ յոյս չունի որ արմատական բարենորոգում տեղի կունենայ Դաշնակցութեան մէջ. Բայց մենք այդ յոյսը ունենք. Երբ որ առաջին անգամ հայ յեղափոխութիւնը գործնական հողի վրա դրվեց ճանկաստանում, միայն մէկ քանի գործիչներ կային երկրում, այդ մի քանի հոգին կարողացան կարճ ժամանակում յեղափոխական զինուորների թիւը աւելացնել եւ գաղափարը տարածել. այժմ բողոքող դաշնակցականների առջեւ այդպիսի ծանր խնդիր չը կայ. հարկաւոր է վճարողական լինել եւ անյողողող:

Այդ վճարողականութիւնը իմ համարների եւ իմ մէջ չէ պակասում. հաւատացած եղէք, Ես չեմ բաւականանում սխալները չը կրկնելու որոշումով. Դաշնակցութիւնը պէտք է արմատական բարեփոխման ենթարկվի: Երբեք պէտք է որոշվեն, դերեր պէտք է որոշվեն, ձրիակերութիւնը, տիրէտանտիզմը, կարի երկը մը պէտք է վերջ գտնի. Եւ այդ պէտք է լինի, հակառակ մի քանի աֆէրիստների եւ նրանց անբան գործիքների գալարումներին. երեկ ես յոյս ունէի, իմ բացարձակօրէն սպարէզ դուրս եկած միջոցին, այսօր ես հաւատում եմ բարենորոգման յաջողութեանը. որովհետեւ առանց դրան Դաշնակցութիւնը, գոնէ ճանկահայ տարրի համար, իր ազդեցութեամբ զըրօյի կը հասնի եւ հասած էր արդէն, բայց դժբախտաբար թէ բարեբախտաբար կովկասեան խնդիրները մէջ տեղ եկան, եւ ժողովուրդը ինքը պաշտօնական Դաշնակցութիւնից առաջ անցնելով՝ իր ետեւից քաշեց մեր կովկասի ընկերներին եւ մեզ անկումից փրկեց. Վաղը կովկասը կը խաղաղի, ուղած չուղած եւ կրկին ճանկահայաստանի

Ինչպիսիք կը տնկվի մեր առջեւ... Գրեթէ կարողանայ այդ խընդրի լուծման համար ունենալ գրական գործ կատարել:

ՎԱՐՂՈ

ՎՈՎԱՍԻ ՎԻՃԱԿԸ

Գրեթէ 20, մեր սեփական թղթակցից:

Երեկ երեկոյան մեծ թուով զինւած թրջական մի քանի խմբեր փորձեցին քաղաքի ներքեւի մասից հայտնաբերել խուփուկ առջիկաները:

Չորքը հասաւ այդ մասը եւ սկսեց թուրքերի հետ փոխադարձ հրացանաձգութիւն, որի մասնակի, ինչպէս ասում են թուրքերի, կողմից սպանւածներ կան:

Նոյն ժամուէն, կայարանից պէտք է 30 սայլ ալիւր եւ ուրիշ ապրանքներ կօծվոյ՞վ անցնէր թրջաց թաղով հայոց թաղը—հայերի համար:

Ճանապարհին պատահում են կայարանի գնացող դատախազը եւ ուսուցիչը: Սայլերին եւ զինւորներին խորհուրդ են տալիս չմտնել քաղաք, այլ վերադառնալ կայարան:

Կայարանից զօրք խնդրեցին. մի սպայի հետ 2) սպայերին ուղեւորւեցին կայարան—որ տեղ կար նաեւ 30 սպայեր, որոնց հսկողութեամբ ալիւրը գրեւորայ ժամի ծին անփորձ հասցրին հայոց թաղը:

Ս. Սահակեան

Գրեթէ 21, մեր սեփական թղթակցից:

«Այս օրը անից հայերին խտրութիւններ չեն տեսնուում: Բոլորը մասին ընդարձակ զրել իմ, 6 մանկահասակներին կոտորել են, 3 չափահաս աղջկանց ու կանանց տարել:»

Ս. Սահակեան

Գրեթէ 19, մեր սեփական թղթակցից:

Թուրքերը Գալի Ալիի առաջնորդութեամբ յարձակել են Նիւզգար գիւղի վրայ: Կռիւղ տեսել է 10 ժամ: Կռիւղի առաջնորդն այլեւս չկարողանալով զիմանալ հայերի կրակին, փախուստ են տալիս: Մինչ այդ, հայ գիւղացիները փակուած են թուրքերի փախուստի ճանապարհը եւ մի այնպիսի ջարդ են տալիս, որ նրանք այլեւս չեն կարողանում իրանց հետ տանել, ինչպէս սովորութիւն ունեն, ո՛չ վերադառնալով, ո՛չ սպանւածները եւ ո՛չ էլ նոյն իսկ իրանց հրացանները:

Գրեթէ 21, մեր սեփական թղթակցից:

«Յուշերով 19ին Բաղրամազը եւ թարկեց յարձակման Ղազարի, Գրեթէ 19ին Բաղրամազը եւ թարկեց յարձակման Ղազարի, Գրեթէ 19ին Բաղրամազը եւ թարկեց յարձակման Ղազարի...»

Պաշարուած շարունակում է: Գրեթէ 13 անգամ զաւլ տւին թնդանօթներով: «Յառաջ»

Գորիս, յուն. 22 ժամ երեկ:

Չանգէզուրի գրութիւնը գնալով ծանրանում է: Յուն. 6ին թուրքերը յարձակեցին Անգեղակոթի վրայ: Բայց յետ փախան, կրելով մեծ կորուստ. 15ին նրանք չըջապատեցին Մոզէսը, թալանեցին մի քանի տուն, բայց յաղթեցին եւ փախան, թողնելով 17 զիւրակ, Հայերը որպէս պատասխան թալանեցին Գեօղաքուն եւ ուրմալիքը: 16ին թուրքերը պաշարեցին Աղաւուրթը, բայց վերացրին պաշարումը, թողնելով 30 զիւրակ յուն. 21 եւ 22ին հարիւր ձիւոր իզրիմէլի առաջնորդութեամբ չըջապատեցին Անգեղակոթին, եւ սպանեցին մի քանի թուրք, մինչեւ որ հասաւ պրիստաւը կողակներին հետ եւ ցրեցին թուրքերի խուփուկ: Անհրաժեշտ է կառավարութեան հաստատուն որոշումը, որպէս զի ընդհանրութեամբ առաջն առնել:

Ներսէս Վարդապետ

Գորիս, յուն. 22ին Մելիք Սզարեանցի անունով ստացուել է հետեւեալ հեռագիրը:

Ողագրութիւնը պահպանելու բոլոր գործը դրած ջանքերին հակառակ անսպասելի կերպով բռնկեց մասսայական շարժում.— հաղորդակցութիւնը կտրուած է.— սպանութիւն, կողոպուտ, գերութիւն շատ է լինում: Արջածրեցիները տաւարը քշել են ձմեռանոցից: Մոզէսը թալանուած է եւ այրւած: Աղաւուրթի վրայ մեծ յարձակում է եղել, Անգեղակոթը պաշարւած է, նոյնը ասում են Ագարակի մասին: Թուրքերը մանր գիւղերից շտապով գաղթում են մեծ գիւղերը: Հարուստ Ղափանը մօտ է կորուստին, նա մասնավաճ է իրերի հոսանքին:

«Արշալոյս»

ՊԱՐԱՃԱՆԴԵՍ

Յառաջիկայ հինգշաբթի Վառնայի Վարժարաններուն ի նպաստ տարեկան պարահանդէսը պիտի տրուի:

Թաղականութիւնը այս առթիւ մասնախումբ մը հրաւիրած է տոմսակները ծախելու եւ առհասարակ պարահանդէսին կարգադրութիւններն ընելու համար: Հրաւիրուողները, թողորն ալ հաճութիւն տուած են գրեթէ, զգալով որ, վերջապէս պէտք է օգտակար ըլլալ կերպով մը, եւ որոշած են աշխատիլ: Բան մը որուն արտանց կուրախանանք, մասնաւոր ձեւով ունենալով որ այդ ինքնագիտակցութիւնը եւ օգտակար հանգիստանալու պարտաճանաչութիւնը ինքնին կրեւան կուգայ մեր ամենէն անտարբեր մեծ-աղա դասակարգին մէջ: Ուստի այժմէն վստահ ենք որ պարահանդէսը նիւթապէս պէտք եղած յայտնութիւնը պիտի ունենայ: Այդ յաջողութիւնը աւելի ընդարձակ պիտի ըլլար եթէ մեր պաշտօնական մարմինները այդքան զանդաղած չըլլային, որովհետեւ պէտք է նկատի ունենալ որ, Վառնայիցիները այս տարի մինչեւ կողոպուտին խնդր

ուեցան տոմսակ ծախողներու անհատնում բազմութեանէն. յոյն, հրէայ, պուրկար անուազն երկերկու անգամ բոլոր շուկաները չաչիցեցին: Հայը մինակ մինչեւ հիմայ դանդաղեցաւ, իսկ հիմայ, պիտի ելլէ անանկ ժամանակ մը. ելք ամէն ազգէ տոմսակ անողներն ալ զգուած են այդ բարեգործական տոմսակներէն, բառին բուն նշանակութեամբ: Ամէն անգամ այս դիտողութիւնը կը լայ մեր պաշտօնական մարմիններուն. բայց ամեն տարի, դարձեալ մինչեւ որ ծայրը ծայրին չի գայ, գործի չեն ելլեր: Ու դեռ չենք խօսիր պարահանդէսին օրուան անյարմարութեան մասին:

Ուրիշ կէտ մըն ալ կայ սակայն, աւելի կարեւոր: Մեր պարահանդէսը, հակառակ իր ազգային անուրին, ընաւ մեր ազգային արժանապատուութիւնը բարձրացնող բնութիւնը: Անկարգութիւն եւ քիչ շատ ներկայանալի դասակարգին բացակայութիւնը ամէն տարի աչքի կը զարնէ: Օտար բարձր շրջանակներու մէջ պարահանդէսի տոմսակ կը վաճառուի. պարահանդէսի կը հրաւիրուին, բայց երբ կուգան, գարմանքով կը տեսնեն որ իրենց տոմսակ վաճառողներն անգամ բացակայ են պարահանդէսէն: Օտարներու քթին խնդալ է ասիկա, բայց մանաւանդ ամօթ մեր ազգային արժանապատուութեան:

Պարահանդէսի յանձնախումբը պէտք չէ բաւականայ միայն գոհացուցիչ դրամ հաւաքելով Անկէ զատ, պէտք է ամէն ճիգ թափէ պէտք եղած բոլոր յարմարութիւնները հոգալու: Մանաւանդ պէտք է իր ճիգը թափէ, ստիպէ գրեթէ, որ բոլոր կարող դասակարգը ներկայ ըլլայ պարահանդէսին, որպէսզի օտար համապատասխան շրջանակներէն հրաւիրուողները իրենց մօտիկ մարդիկ գտնան հոն Յանձնախումբը ջանալու է որ այս տարի գոնէ այնպիսի նախաձեռնի պարահանդէս մը սարքէ որ, բոլոր եկողները գոհ մնան, եւ ամէն տարի փնտռուի, սպասուի հայոց պարահանդէսին:

Այնպիսով թիւնը եւ կամքը ամէն դժուարութեան կը յաղթէ Յանձնախումբին կը պահանջներ որ ունենայ այդ կամքն ու աշխատութիւնը, որովհետեւ այդ գործին ամենէն յարմար անձերէն բաղկացած է:

Քրիստոստո

ԱՆՔՈՒՆ ԱՂԵՏՆԵՐԸ

(Շուր. 786 յիւնիս եւ վերջ)

Երէկուան ալքոլամոլին, ինչպէս վաղուան ալքոլամոլին՝ փրկութեան յենարաններ պէտք են, եւ այդ յենարաններն ուրիշ բան չեն կրնար ըլլալ, բայց եթէ վերը յիշուած միջոցները՝ գրիչով, խօսքով մաքառելու համոզելու որ ետ կենան իրենց այդ մոլութենէն:

Ալքոլի չափազանց գործածութեան կարեւորագոյն վնասներէն սկիզբ առնել է որ մարդուն զգայարաններուն վրայ կարգէ եւ անոնց կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարէ: Թաճախ՝ ալքոլամոլի կատարեալ անզգայութեան կը մատուցի շատ անգամ ալ բանազգուշանք կուրենայ: Կը պատահի երբեմն որ երեւակայական ճանճեր տեսնել կը

կարծէ իր շուրջը, որովհետեւ ալքոլը աշուրներու զօրութիւնն ալ կը խաթարէ: Եղած են ալքոլամոլներ որոնք անանկ կարծած են թէ մուկեր կը շրջին իրենց մարմիններ վրայ: Լքստողութիւնն ալ անվար չի մնար, նաեւ չօչափելու կարողութիւնը, թուեցնէ նաեւ այն վնասն որուն կենթարկուի ալքոլամոլին միտքը: Այդ չէ՞ պատճառն որ բանականութիւնը կը կորսնցնէ ըրածը թողածը չի հասկնար, անխմտ ազգակներ կարծակէ կը կոտրէ, կը թափէ, և յաճախ՝ աւելի ծանր ու անդարմանելի արարքներ կը գործէ:

Մարդ երբ ունէ ողբից ըմպելիք կը խմէ,— քիչ կամ միջին քանակութեամբ— թիւոյն տեսակ մը հրճուածք ընդհանուր գրգռութիւն եւ ուղեղային գործունէութեան կենսունակութիւն մը կը զգայ, բայց միեւնոյն աստի՛ իր ուշադրութեան կարողութիւնն ու զգայարաններուն ըմբռնողութեան կը նուազին: Այդ գրգռութեան կը յաջորդէ զլիստ ծանրութիւն մը՝ ընկերացած մտաւոր կարողութեան աւելի կամ նուազ շնչտուած սկարացման, ասկէ զատ՝ քաւուածքը կը գեղեւի, բերանը կը շուրնայ, թուքը կը թանձրանայ և խուսի կը վերածուի, զինով կը նեղուի նաեւ ստամոքսի անհանգստութեամբ և ցաւազին ու սաթանելի փսխաքներ կուրենայ: շատ անգամ ալ դաւուրի (սարքը) կենթարկուի: Նշանաւորութիւնը կը խանգարուի եւ մորթը կուտուծան ենթակայ կը դառնայ: Երբ խմուած ալքոլին քանակութիւնը կաւենայ, այն աստե՛ ուղեղային խանգարումները աւելի՛ կը շնչտուին: Ուշիմութիւնը կանհետանայ, զինով անզգայութեան վիճակի մը մէջ կ'ընայ: Նշանաւորութիւնն հոնքիւնի կը փոխուի, բազկերակը կը նուազի եւ սրտին գործունէութիւնը կը սկարտանայ:

Ուր էր օ՛ է ալքոլամոլութիւնն ալ ունենար իր մանէն. . . Տօքթ. Պարթիէն այս յատկանշական խօսքերով կը վերջացնէ իր մէկ բանախօսութիւնը՝ այս աւելի մոլութեան նըկատմամբ: Այո՛, ո՛ւր էր թէ ալքոլամոլութիւնն ալ ունենար իր մանրէն, որպէսզի կարելի ըլլար անոր դէմ մաքառել ու դայն ջնջել:

Եթէ ժանտախար, քոլերան, դեղին տենցը և կամ համաճարակ մահացու համաճարակներ հազարաւոր գոհեր խլած են մարդկութենէն, վստահ եղէք թէ ալքոլամոլութիւնը միլիոններ խլած է: Մանաւանդ որ՝ համաճարակները պարբերաբար միայն երեւան կ'ըլլեն, մինչդեռ ալքոլամոլութիւնը ընդմիջտ ցոյցութիւն ունի:

Ասկէ զատ՝ համաճարակ հիւանդութենէ մեռնող մարդու մը զաւակն ոչ մէկ ֆիլիթեական վնասի կենթարկուի այդ պատճառաւ: Արդ, ալքոլամոլութեան համար այդպէս չէ ալքոլամոլի իր ֆիզիքական քայքայումն ալ կը փոխանցէ իր սերունդին, Ընդունինք ուրիմն որ ալքոլամոլութիւնը՝ շատ աւելի աղետալի եղած է մարդկութեան համար, քան ամենէն սոսկալի համաճարակներն ու ամենէն անարկու պատերազմները:

Ալքոլը եղեռնագործութեան ու խեղաքարութեան կը տանի մարդը: Բանտին ու հիւանդանոցին ճամբան է՝՝ ըսած է տեղ մը Տօքթ. Մոնէն: Պիտի աւելցնեն թէ ընտանիքին կործանումն է, սերունդին փճացումը և մեծագոյն աղետը մարդկային ազգին համար:

(Արտատպուած)

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌ ԱԿԱՆ ԱՐԱՐԻՒՆ,
ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

ԸՆԴՀ. ԴԱՏԱՍԱԶԻՆ ՃՍՈՐ

(ՎՄանգում է Էֆեբարուն քաղաքում)

(Շար. 784 թիվէն)

Հաճի նշանի վերոյիշեալ կերպով անձնասպանութեամբ մեռած ըլլալը հաստատուած է դատական պաշտօնաթուղթերուն մէջ գտնուած արձանագրութեան թուղթով և բժիշկներու անգեղակազրով: Ճեմիշին այն թիթեղեայ ը պրից որ ծածուկելով հատու գործիքի վերածուած էր վերոյիշեալ բժիշկներուն կողմէ քննուելով՝ հաստատուած է որ անոր սուր կողմերը յար և նման են նշանի իր անձին վրայ բացած վերքերուն ձևին. ասկէ գատ «բարձր» սուր կողմերուն վրայ նշմարուած են ճարպի կտորներ և արեան ճապարկներ որոնք բացարձակապէս և զիտականօրէն կր հաստատեն թէ յիշեալը այս «բարձր» սուր կողմերով ինքզինքը սպաննած է:

Բաժայայ է որ յիշեալը քովի էին առջեւ իր ունեցած նախագահական դիրքին պատճառով ի գործ դրած է իր այս արհամարհելի արարքը. ինչ որ անշուշտ արդիւնք է խոզկարներուն ծածուկ հրահանգին: Այսուամենայնիւ՝ յիշեալը իր եղիտնագործ ընկերներուն հանդէպ այս անձնու իրութեամբը՝ պայտուցած է իր անիշխանական վատ գաղտնաբարը, և սուսուած է անիտեալ և վայրագ օրինակ մը:

Նշանի վերջին խոստովանութիւններուն համաձայն վերոյիշեալ մոմյաթի վաճառատան մէջ լիակատար քննութիւն կատարելու համար անմիջապէս հոն փութացուեցաւ: Անձնասպան նշանի ըսածին պէս, սեռնուեցաւ որ արդարեւ խանութիին տակ նկուղ մը կայ, ուր ճշմարտապէս պեղուածի հետքեր կը տեսնուին:

Թիւնէլին ուղղութեամբ և սակայն հակառակ խուզարկութիւններուն՝ նշանի ըսած հինգ պոպաները անկարելի եղաւ գտնել հողին տակէն:

Ինչպէս կը յիշուի, տասը ամիսէ ի վեր մեծ զգուշութեամբ ժողով տան մէջ պահուած մէլիքի թղթեան կանխապարտ դէպքին կատարուելիք օրը որոշուելէ ետք՝ անկէ քիչ առաջ պայտուցակներով արտա փոխադրուած էր: Այս հրահանգին հազիւ 80 քիլօ գործածուած էր ու հասկցուած էր որ մնացածը՝ այս անիտապարտ եղեանագործներուն ձեռքով այլ եւ այլ տեղիւր փոխադրուած ու պահուած է: Մէլիքի թի այս մնացորդը մէջտեղ հանելու և բացայայտ վտանգը անհետացնելու համար եղած ձեռնարկներուն հետեւանքով՝ հասկցուեցաւ որ մնացած մէլիքի թի 30 քիլօն դռնպան ամրաստանեալ Մանուկի յանձնուած է որ գոյն հորը նետելով ունեցուցած է. այդ հորէն հանուած տիղմերը երբ տարրալուծուեցան, գիտական վկայագրերով հաստատուեցաւ որ մէլիքի թի տիղմին խառնուած էր իսկ մէլիքի թի 32 քիլօն ալ եղեանական դէպքէն մինչեւ մէկ քանի օր առաջ, փոխադրուած էր Աւստրիական հիւանդանոցին դռնպան Առաքելի քով, ուր պահուած էր անոր քով ձգուած միւս հրահանգներուն հետ, ինչ որ պայտուցուեցաւ նաեւ անով որ ամբողջութեամբ գտնուեցան Առաքելի քովէն:

Հետեւաբար պայտուցուած ժամանակ գործածուած 80 քիլօ մէլիքի թի վրայ երբ աւելցնենք նաեւ հորէն հանուած ու հիւանդանոցէն գտնուած 62 քիլօ մէլիքի թի, կը հաստատուի թէ անիտապարտ նպատակով ժողով տունը պահուած 140 քիլօ մէլիքի թի ամբողջութեամբ մէջտեղ հանուած է. հետեւաբար այս եղեանական նպատակներով յիշեալ ամրաստանեալներուն կողմէ ուրիշ մէլիքի չբերուած եւ ուրիշ տեղ պահուած չըլլալով, ասկէ գոյանալիք հաւանական չարի

քին առաջը առնուած է շնորհիւ վեհ. կայսեր և հարցաքննութիւններն ու խուզարկութիւնները այս պիտի դիտան և ճշմարտ արդիւնքի մը յանգեցան:

Յեղափոխական զգացումներու և անիտապարտ արարքներու հանդէպ՝ ժողով այսչափ տաք ու արագ վերաբերուած է և անոր անիշխանական ստոր յայտարարութիւններն ու վատ յանդիմանութիւնը նկատողութեան առնուելով որոշուեցաւ իր ծննդավայրէն տեղեկութիւն քաղել անոր անձնական նկարագրին ու անցեալին վրայ: Աստի այս առթիւ հարցում ուղղուեցաւ Պրիւքսէլի օսմ. դեպքանութեան որ Անվէրսի ընդհ. դատախազին իրեն մատուցած տեղեկագրէն քաղելով հաղորդեց թէ, ժողով Անվէրսի մէջ հոշակ հանած է իրբեւ անիշխանական գաղափարներ սնուցանող:

Վերել տրուած բացատրութեան շարքին մէջ ժողով ըրած խոստովանութիւններուն վրայ՝ անհրաժեշտ նկատուած քննութիւններէն ձեռք բերուած նամակը Լոնտոնի Անկուպ Լիթիան Սիլուէրսանթոն ընկերութեան Սնվէրսի դործակալ Ժագուս և ընդ. ստորագրութիւնը կը կրէր: Այս նամակին ու անոր ծանօթ պարտականութեանը նկատմամբ երբ բացատրութիւն պահանջուեցաւ, ժողով յայտարարեց թէ Լիթիան մեծ կարեւորութիւն ունէր քովի էին առջեւ, ուստի վերոյիշեալ տեղեկութեան տան գրաւորապէս դիմում եղաւ թէ կերպաւորութեան Լիթիանը Պարթուր զրկել:

Այս հարցումին պատասխանէր վերոյիշեալ ընկերութեան զրկած այն նամակը որով կը ծանուցուէր թէ իրենց վաճառատունը այս գործին մէջ անտեղութիւն մը չի տեսներ առեւտրական տեսակէտով. հետեւաբար պատրաստ է զայն ընդունելու: Առեւտրական տունը միեւնոյն ժամանակ գրած էր թէ իրեն ձեռնարկելիք այդ գործին հետեւանքին ղեկ

անհրաժեշտ էր ապահովել զինք: Յետոյ ընկերութեան անդամներէն մէկը մասնաւոր արտօնութեամբ այս առեւտրական տան մօտ երթալով այս խնդիրը լուծած էր, ուստի այլեւս ոեւէ թղթակցութիւն տեղի ունեցած չէր այս խնդրոյն առթիւ, ժողով և ըրար միջեւ:

Վերջին անգամ ժողովի գերմանական նամակատան մէջ ունեցած տուփէն գտնուած իր անուամբ եկած նամակներէն Սօֆի ստորագրութիւնը կրող նամակ մը գերման հիւպատոսարանին թարգմանին կողմէ բերուելով երբ բացուեցաւ, տեսնուեցաւ որ գերմաներէն գրուած էր. նամակը թարգմանուեցաւ որուն մէջ հետեւեալ ուշագրաւ կէտերը կային:

(Շարունակելի)

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Աղբ. Ընդ. Գարծ. Ժողովը շնորհակալութեամբ ստացած է յունուար ամսոյ մէջ հետեւեալ նուիրատուութիւնները:

Բոզմաթիի ազգայիններէն Տիկ. Էպրուհ Մ. Յովհաննէսեանի կանկար. սիներու արժէքը 30 ֆր. Տ. Ս. Մըկրտիչ Գաֆաթեան կնքահայրութեան արժիւ 10 ֆր. 10 սանթիմ. Սարգիս Բիւրտեան Ս. Մննդեան արժիւ 10 ֆր., դերասանապետ Արշակ պէնկեան 10 ֆր.

Անուան տոնախմբութեանց արժիւ Տ. Տ. Կարապետ Փափագեան 5 ֆր., Կարապետ Աճէմեան 5 ֆ., Կարապետ Յակոբեան 3, Մկրտիչ Պողոսեան 3, Պաղտիկ Զիյէրճեան 3, Կարապետ Ղազարեան 3, Կարապետ Շիրինեան 2, Մկրտիչ տէր Սաչատուրեան 2, Կարապետ Մանուկեան 2, Աւետիս Չարպահանջեան 2, Մուրա Մանուկեան 2, Կարապետ Քուրտեան 2, Սարգիս Էլվանեան 2, Յակոբ Մարգարեան 1, Աւետիս

Օ Ք Թ Ա Վ Մ Ի Ր Պ Օ

Ա Պ Պ Է Ժ Ի Ի Լ

Բ. Մ Ա Ս

(Հատուածներ)

Օրը կը տարաժամէր. ապրիլեան քաղցրիկ օրուան մը իրիկունն էր. Ես ու հօրեղբայրս սենեկին պատուհանին յենած՝ կը դիտէինք դուրսը: Տակաւին մոթը չէր կոխած բոլորովին, այլ աւելի նուրբ, տոգոյն ու նուազուն լոյս մը կը սփռուէր երկրին վրայ: Անտառին ետեւէն արեւը թեթեւ կանանչ շուշուփ սնգուրուած կը խոնարհէր. ամառուան ծովի մը պէս խաղաղ, երկնքին երեսը ամպ մը իսկ չէր երևեր. դիւթիջ տօգունութիւն մը կը պատէր գոյն. իսկ արեւմուտքը վարդագոյն փայլ մը առած էր: Կեանքը կը վերածնէր. ծառերուն ձիւղերը կուռճանախն բացուելու պատրաստ ծիլերով: Մանրերը երջանիկ էին իրենց բեղուն ստորով: Յուզայնիները սկսած էին արդէն ցուցադրել իրենց ծաղիկներուն կարմրագոյն զարդարանքը: Կասկեմի մը անդին, կարճակէր քնքուշօրէն կանանչ իր լայն տերեւները: Բնզմուտքուած ու ծեղրու-

րում մը կը բարձրանար ամբողջովին սիրով ողորուած հողին երեսէն: Տանձենիի մը վրայ մեր դէմը, երկու ճնճղուկներ դիրար կը հետապնդէին, կը զուգուէին. փետուրին իրար խոնամ. զեղեւուն թեւերով:

— Գիտես թէ ի՞նչ կընեն... հարցուց հօրեղբայրս անակնկալ կերպով:

— Ո՛չ, հօրեղբայր, չեմ գիտեր:

— Կը սիրուտին... քեզի այս բանը պարզ կարճ ու սիրուն կերեւայ այնպէս չէ՞... Որովհետեւ անասունները պարզ էակներ են համեստօրէն կազմակերպուած, և որոնք իրերու արժէքը կը ճանչնան, որոնք ոչ փիլիսոփաներ ունին, ոչ դիտուններ որ իրենց բացատրէ թէ ի՞նչ է սէրը... նայէ՛ ահաւասիկ մեկնեցան, առանց խղճի խայթիլ...:

Ո՛ր իւրաքանչիւր նախադասութեան վերջը կենալով—որովհետեւ այս միջոցին կը հեւար գրեթէ—ըսաւ ինձի:

— Մենք որ, դժբաղդաբար, անասուններ չենք, տարբեր կերպով կը սիրուտինք... Սիրոյ մէջ փոխանակ պահելու անոր բնական նկարագիրը, կանոնաւոր, հանդարտ ու ազնիւ գործի մը նկարագիրը, վերջապէս գործարանական պահանջքի մը նկարագիրը... անոր մէջ ներմուծած են երազը... երազը մեզի բերած է անյագելի... և անյագելին՝ ցոփու-

թիւնը: Որովհետեւ ցոփութիւնը բընական սիրոյ այլաձեւումն է իտէալին միջոցու... կրօնքները—մանաւանդ կաթոլիկ կրօնքը—սիրոյ մեծագոյն կաւատուելիներն եղած են... իրր թէ անոր անասնական կողմը մեղմացնելու պատրուակով—որ սակայն միակ իր գիւցազնական կողմն է—զարգացուցած են անոր յոռի ու հիւանդագին կողմերը երաժշտութեանց ու անուշահոտութեանց զգայականութիւնով, աղօթքներու միատիքականութեամբ և պաշտամունքներու բարոյական քիչութեամբ... Կը հասկնաս... ասոնք շատ լաւ գիտէին իրենց գործը վտանգ եղիր: Անոնք համոզուած էին որ մարդը անբնացնելու և շղթայապիրկ ընելու ամենէն լաւագոյն ու ամենէն ապահով միջոցն էր աս: Ու բանաստեղծները սէրէն զատ ուրիշ բան չերգեցին այլեւս, արուեստը միայն սէրը փառաբանեց... ու սէրը գերիշխեց կեանքի վրայ, ինչպէս խարազանը կիշիէ գերիշխեց կոնակներին՝ զայն պատառ պատառ ընելով, ինչպէս ոճրագործին զանակը կիշիէ կուրծքին՝ զոր պիտի ծակէ... Մնաց որ, Աստուած... Աստուած ըսուածն ալ արդէն սիրոյ շուայտ մէկ ծայրահեղութիւնն է... անողորմելի գերագոյն վայելքն է ան որուն կը ձգտին մեր բոլոր պատրաստած իզձերը առանց երբէք հաս-


նելու... ժամանակ մը ես ալ սիրոյ հաւատացի, հաւատացի նաև Աստուծոյ... հիմայ ալ շատ անգամ կը հաւատամ, որովհետեւ երբէք այս թոյնէն ամբողջութեամբ չապաքինիր մարդ... եկեղեցիներու մէջ, հանդիսաւոր տոներու օրին, երգեհոներու եղանակներով զինովցած, խոնկին արքանքէն թուլցած, սաղմոսերգութեանց հրաշալի բանաստեղծութեանց պատուած, կը զգամ որ հօգիս կը յափշտակուի... հօգիս կը սարսոյ, ցնցուելով իր բոլոր տարտամ խանդավառութիւններուն, իր բոլոր անկաղապար տենջանքներուն մէջ, ինչպէս միւս կը սարսոյ, կը ցնցուի մինչեւ իր ծուծը մերկ կնոջ մը կամ միայն անոր երազուած պատկերին առջեւ... հասկցա՞ր...:

— Ոչ, հօրեղբայր պատասխանեցի երկշտօրէն:

— Իայց ի՞նչ կը հասկնաս դուն հապա:

— Հօրեղբայր, համարձակեցայ վերջապէս ըսելու, դուք միշտ ինձի անանկ բաներու վրայ կը խօսիք: որոնք երկիւղ կը պատճառեն ինձի:

(Շարունակելի)



Մեխանիկան 1, Կարապետ Քէչեղե-
եան 1, Սարգիս Մըսրէլեան 1, Սար-
գիս Կիրակոսեան 1, Կարապետ Մար-
գարեան 1,

Հարսանեաց առթիւ :
4. 4. Միրիճեան Մկրտիչեան 1 Ֆր.,
Անդրանիկ Ծավրուեան, 2 Ֆր. Յով-
հաննէս Մանուկեան 2 Ֆր. Սաչիկ
Կարապետեան 50 սնթ.

Նուիրատուութիւն : Արժ. Տէր
Յակոբ Քէչեղ. Տէր Յակոբեան 5 Ֆր.
Գէորգ Հալաճեան, 2 Ֆր. Թադէոս
Պոխճալեան, 2 Ֆր. Մանուկ Տէօնպէ-
լէքեան, 1.50 Ֆր. Ոմն, 1 Ֆր. Արտա-
շէս Թաճեան, 1 Ֆր. Պաղտատար Մա-
նուկեան, 1 Ֆր. Վաղարշակ Քէօլէեան
1 Ֆր. գումար 125 Ֆր. 10 սանդիմ :
Այս առթիւ կը փութամք հրապա-
րակաւ յայտնել մեր անկեղծ շնորհա-
կալիքը Տ. Տ. Միրիճեան Սեղրակեանի
եւ Հրանդ Գարակէօզեանի որք բա-
րեհաճեցան ինչպստ ընկերութեանս
սարքուած թատերական երեկոյթին
առանց ու եւ վարձք ստանալու ըն-
կերութեանս տրամադրութեան տակ
զննել իրենց սրահը :

Եւ նոյնպէս Տ. Տ. Միրիճեան Համ-
բարձումեանի եւ Գէորգ Հալաճեանի
որք ամէն շնք ի գործ դրին ի նը-
պաստ ընկ. սարքուած թատերական
երեկոյթի տոմսակներու սպառման
համար :

Ի զիմաց Աղք. Ընկ. Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Զարպիսեան Ս. Սամուէլեան
(Կնիք)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուրկարո—թրքական մաքսա-
յին համաձայնութիւնը վերաքն-
նելու համար Թուրքիոյ առա-
ջարկը ընդունուեցաւ երկրիս
իշխանութենէն : Ելևտոսկան
նախարարը որոշեց յանձնաժո-
ղովի անդամները որոնք շուտով
Պոլիս պիտի մեկնին :

— Հեռագիրները կը հաղոր-
դեն թէ Միւնիք փաշայի Սօֆիա
այցելութեան նպատակը եղած է
պուրկար կառավարութիւնը հա-
մաձայնութեան բերել իր երկ-
րին մէջ ապաստանած հայ յե-
ղափոխականները թուրքին
յանձնելու եւ անոնց գործունէու-
թեան ասպարէզ չի ձգելու : Թէ
որքան նշանակութիւն ունեցած
են Միւնիքի այս գիմումները,
իսկոյն պիտի հասկցուի երբ ը-
սենք թէ իշխան Յէրտինանտ
զիւրու ցաւ մտիկ չընելու համար,
բանակցութիւններուն հոգը նա
խարարութեան ձգելով, Միւ-
նիքն ալ Սօֆիա թողուց ու շի-
տակ Վառնա եկաւ : Միւնիք
փաշայի տեսակցութեանց նիւթը
եղած է նաև փոխադարձ վստա-
հութիւններ տալ բարեկամու-
թեան եւ հերքել տարաձայնուած
զինուորական պատրաստութեան
լուրերը Մաքսային վերջին խզու-
մըն ալ իր զբաղման նիւթ եղեր է

— Սերպ—աւստրիական մաք-
սային կռիւր նոր փուլի մը մէջ
սկսաւ մտնել : Մինչեւ հիմա Ա-
ւստրիա կընդդիմանար Սերպ—

պուրկարական մաքսային միու-
թեան ոչ այնքան տնտեսապէս
անկէ կրելիք ֆլաուին համար
որքան անոր քաղաքական ազդե-
ցութիւնը կատարելու համար : Բայց
որովհետեւ չէր կրնար բացէ ի
բաց իր դիտաւորութիւնը յայտ-
նել, տնտեսապէս իր կրելիք
ֆլաուր պատրուակ կը բռնէր քան-
զելու համար այս միութիւնը :
Սերպ կառավարութիւնը ասիկայ
հասկնալով, նոր ծանուցագիր մը
ըրկած է Աւստրիոյ, ուր կը խնդ-
րէ որ յիշեալը յայտնէ թէ Սերպ-
պուրկարական համաձայնութեան
իր պահանջած փոփոխութիւն-
ները որոնք են : Աւստրիա նեղ
դիտութեան մէջ մնացած է, որով-
հետեւ անոր նպատակը ինչպէս
ըսինք, տնտեսական առաւելու-
թիւններ ձեռք բերել չէ զիւրա-
ւորաբար, այլ քանզեւ այդ մի-
ութիւնը որուն մէջ վտանգաւոր
սպագայ մը կը կարծէ տեսնել
իր քաղաքական ծրագիրներուն
դէմ ցցուող :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Հուր կայ թէ աստիկ հառա-
վարութիւնը նկատի առնելով իր
զօրքերուն եւ մէկնի մէջ կրած
չարաչար պարտութիւնները, Ա-
զիզ պէյ անուն մէկը պիտի շրկէ
այն կողմերը, որպէսզի ուսում-
նասիրէ արաբներու ապստամբու-
թեան ու կառավարութեան անյա-
ջողութեանց պատճառները եւ
քննէ թէ ի՞նչ միջոցներ ձեռք
առնելու է Եւրոպէն խաղաղեցնե-
լու համար :

— Մօրնինկ փոսթ « կը տե-
ղակացնէ թէ ինուրք կառավա-
րութիւնը համոզուած է որ Մա-
կեդոնիոյ մէջ յեղափոխական
չէթաները մեծ պատրաստու-
թիւններ կը տեսնեն : յստալի-
կայ գարնան երկրին մէջ ընդհ.՝
ապստամբութիւն պայթեցնելու
համար :

— Պօլսէն Գիւլպիշէր Բրէսօին
կիմացնեն թէ Սուլթանը մեք-
ժած է պարսիկ սահմանազիւն
զօրքը ետ քաշել : պարսիկ կա-
ռավարութիւնը որոշած է նոյն
պէս թուրք սահմանազիւն լար
20,000 զօրք ուղարկել, երկու
տէրութեանց յարաբերութիւն-
ները խղուած են : Անգլիան եւ
Ռուսիան կը ջանան միջամտել
վիճելի խնդիրը խաղաղութեամբ
կարգադրել :

— Պօլս.— Գաղաքապետ Բէա-
վան փաշայի դիրքը խախտած է,
կըսուի թէ նա ուղարկուելու է
իբր նահանգապետ : Ասիական վի-
լայէթները, սակայն աչքի առաջ
ունենալով Բէտովան փաշայի մա-
տուցած ծառայութիւնները քա-

ղաքական շրջանակներու մէջ կը
հաւատան թէ Սուլթանը միշտ
պիտի պահէ զայն իր պաշտօնին
մէջ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ոստիկանութիւնը Մոսկվայի
մէջ ուսանողներէ բազմաքանակ
յեղափոխական բոմբիւթի բոլոր
անդամները ձերբակալել է, երբ
անոնք նիստ ընելու հաւաքուած
էին : Ամէնուն վրայէն ալ վեց-
հարուածներ եւ գաշոյններ գրտ-
նուեր են : Նէնքին շուրջը հա-
ւաքուած ամբոխը օգնել է ոս-
տիկանութեան ձերբակալու-
թեանց միջոցին : Ուսանող մը
յաջողք է կառք մը նստիլ ու
խոյս տալ :

— Կառավարութիւնը որչափ
է նոր թղթագրամներ հրապա-
րակ հանել : զի ու ինչ քանակու-
թեամբ ըլլալը յայտնի չէ թէ, եւ
բայց կառավարութիւնը այն նը-
պատակին համար 30,000 քիւլ-
պանքնութի թուղթ պատրաստել
կուտայ :

— Գիւլպէն կիմացնեն թէ շու-
տով կը սպասուի Չարի նոր յայ-
տարարութեան, ըստ յայտարա-
րութեան ամբողջ քաղաքական
յանցաւորները ազատ արձակուե-
լու են : Կը հաւաստեն թէ ներ-
ման պիտի ալմանան նաև
հրէայ քաղաքական յանցաւոր-
ները :

Նոյն յայտարարութեան մէջ
որոշուած պիտի ըլլայ Կոստա-
րէսովէնա տումայի բացման
թուականը :

— Մոսկվայէն կիմացնեն թէ՝
իշխանուհիի մը տան բակէն նա-
հանգապետ Տուպտսցի հասցէին
տուփ մը գտնուած է ոստիկա-
նութենէ բացուելով գտած են
չաքարներու ներքեւ պահուած
խոչոր ումբ մը :

— Օտէսայի զինուորական
բաժնի պէտը ընկալութեան ազ-
դարարած է թէ այն անձերը որ
պայթուցիկ նիւթերով յարձա-
կում կամ մարդասպանութիւն
գործելու մէջ եթէ ամբաստան-
ւին մահուան գառապարտուելու
են :

— Վլատիվոսթօքի մէջ կարգը
վերահաստատուած է :

— Բեթերսպուրկէ «Լուպ»
թերթի կիմացնեն թէ՝ ներքին
գործոց նախարարութեան հրա-
մանով յեղափոխականներէ 800
հոգի Սէպիր զրկուած են :

— Բարիչ Բեթերսպուրկէ կի-
մացնեն թէ գործաւորական խոր
հուրդի, 65 պատուիրակները ո-
րոնք մինչեւ հիմայ Բեթերս-
պուրկի բանտերուն մէջ կը մնա-
յին, զրկուած են Արհանդէլսքի,
Թապուրի եւ Էնիսէի նահանգ-
ները :

ՄՐԱՀ «ՍԱՒՏԻՆԷՆԷ»

1906 Փետրուար 8ին Զորեք-
չարթի երեկոյեան ժամը ճիշտ
8 1/2 ինչարտաքոյ կարգի շքեղ
ներկայացումն «ՄԱՍԻՍԿ» Թատերա-
սէր խմբի կողմէ ի նպաստ Խար-
բերգի երկրաշարժի արկածելոց
Առաջնորդութեամբ կարգադիր
Մասնախմբի առաջին անգամ ըլ-
լալով Բ Ո Ղ Ո Ք Ա Գ Ի Ր Ը եր-
գախառն ողբերգութիւն 3 արար-
եւ 2 պատկեր, հեղինակ Ա. Շի-
տանեանի. Երկրորդ անգամ ըլ-
լալով ըստ խնդրանաց թատերա-
սիրաց պիտի ներկայացուի :

Գ Ր Ա Ի Ո Ւ Մ Ր

Ողբերգութիւն 4 արար եւ մէկ
պատկեր :



Ա Ձ Դ

Յիլիպէի եւ շրջակայ հայ հասա-
րակութեան կիմացնեն թէ «Գ ըր
պ ա ն ի» Ազգային Հիւանդանո-
ցի օրացոյցներ կը ծախսվ խիստ ա-
ժան գիներով որոնք են.

- Յիլիպէի համար գրպանի 40 սնթ.
- « Գուրս գրպանի 45 «
- Փոստի ծախքը մեր վրայ Փոխար-
մէքը նամակադրոյ մը կընդունուի
Հասցէ՝ Նշան Տումանեան Ֆիլիպի
1-3

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Լոյս տեսաւ Ի Լօնտօն «ՊԱՏԱՆԻՆ»
ամսաթերթի տպարանէն.

ՊԱՏԱՆԻՆԻՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԽՆԴ-
ՐՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐՑԻ. Հեղինակութիւն Բրօք. Թու-
մայեանի Նիւթին շահեկանութիւնը
եւ հեղինակին համոթիւնը եւ ոճը
մեծ արժէք կուտան այս 670 էջերէ
բաղկացեալ եւ երկու հատորի բաժ-
նուած գրքին : Գինը Պուրկարիոյ հա-
մար 4.40 Ֆր. փոստով 4.80 Ֆր.

Գրպանի երկուսն, կը պարու-
նակէ 100 հատ ընտրեալ ազգային
երգեր, Գինը Պուրկարիոյ համար 1.
բոստով 1.10 :

Փափաքողները կրնան զիմել հե-
տեւեալ Հասցէին

Représantante de la Revue «Badani» chez
M-r Avedis Melidonian — Varna
Bulgarie

Վճարումները պէտք է կանխիկ ըլլան :

ԱՒՐՈՐԱ Ռուսահայ թերթ,
Ռուսահայ լեզուով.
Հասցէ Խմբ. Աւստրոսայի Պուր-
կար, Ռուսահայ Սթրատա Արա-
թարի լիւր. 46